

## ԽՈՐԵՆԱՑԻԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ «ՀԱՆՂԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ»Ի ԷՋԵՐՈՒՄ

Հայ պարբերական մամուլի երկրորդ երկարակետացրել «Հանդէս ամսօրեայ»-ն 1987 թ. Յունուարին բոլորեց իր 100 տարին: Այս ամբողջ ժամանակաշրջանում «Հանդէս ամսօրեայ»-ն մեծապէս նպաստել է Հայագիտութեան զարգացման գործին, հանդիսացել այդ բնագաւառի ամենանշանաւոր ջահակիրներից մէկը: Նրա էջերում հրատարակուել են հարիւրաւոր գիտական բարձրարժէք ուսումնասիրութիւններ, մի շարք բնագրեր (առաջին անգամ)՝ հայ հին եւ միջնադարեան ձեռագրերից, մատենագիտութիւններ տարբեր երկրներում լոյս տեսած հայագիտական հետազոտութիւնների վերաբերեալ, հնագիտական յայտնագործութիւններ եւ հայագիտական արժէք ունեցող զանազան այլ նիւթեր:

Ակնառու եւ անուրանալի է «Հանդէս ամսօրեայ»-ի դերը, յատկապէս Խորենացիագիտութեան բնագաւառում՝ իր գործունէութեան առաջին 25-ամեայ ժամանակահատուածում (1887-1912 թթ.): Այս 25-ամեակը զուգարդիւյուն է Խորենացիագիտութեան երկրորդ փուլին (1876-1912 թթ.), որին Հրանդ Բ. Արմէն լիցել է Խորենացու քննադատութեան «մոլեգնոտ միջնադար»:

Միանգամայն իրաւացի է Հրանդ Բ. Արմէն, իրօք տուեալ ժամանակահատուածը եղաւ Խորենացու քննադատութեան «մոլեգնոտ միջնադար», երբ բազմացաւ-մեծացաւ Խորենացիագիտների բանակը, երբ Խորենացիագիտութեան հիմնահարցերի շուրջ էլ աւելի գատուեցին-բերեղացան երկու հակադիր ուղղութիւններ, այսպէս ասած՝ Խորենացիամէտ եւ Խորենացիամերժ, կամ՝ Խորենացուն հաւատացողների եւ չհաւատացողների, երբ յամառ, անզիջում եւ կրքոտ պայքար ծաւալուեց սրանց միջեւ, երբ յաճախ (չատ յաճախ) ուսումնասիրողների կանխակալ նախապաշարումները, նոյնիսկ տրամադրուածութիւնը համարուեց աւելին, քան գիտական անաչառ քննադատութիւնը:

Յամառ եւ անզիջում այս գիտապայքարում, ահա, «Հանդէս ամսօրեայ»-ն ստանձնեց Խորենացիագիտութեան առաջատարի դերը, իր փութաշանութեամբ դարձաւ Խորենացիագիտութեան կենդրոն եւ ինչ-որ չափով թելադրող, գերազանցելով նոյնիսկ շուրջ կէսդարեայ Խորենացիագիտական փորձ ու տարիք ունեցող «Բազմավէպ»-ին, որ առաւելապէս ունէր Խորենացիապաշտպան ուղղութիւն: Ի դէպ՝ տուեալ ժամանակաշրջանում Խորենացու շուրջ ծաւալուած պայքարը հաւասարապէս պայքար էր նաեւ «Բազմավէպ»-ի եւ «Հանդէս ամսօրեայ»-ի միջեւ, քանի որ դրսեւորել են հակադիր ուղղութիւն եւ տրամադրութիւն:

Ինչպէս Խորենացիագիտութեան առաջին ժամանակահատուածում (1736-1876 թթ.), այնպէս էլ այժմ՝ երկրորդում (1876-20-րդ դարի սկիզբներ), այնպէս էլ մասնաւորապէս, «Հանդէս ամսօրեայ»-ի համապատասխան ուսումնասիրութիւններում քննարկման առանցք են հանդիսացել Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» սկզբնաղբիւրները, սոսկ այն տարբերութեամբ, որ առաջին ժամանակահատուածում հիմնականում զբաղուել են Խորենացու յիշած աղբիւրների քննութեամբ՝ դրանց հաստատումով կամ հերքումով (ուսումնասիրողների մեծադոյն մասը ընթացել է հերքելու ուղիով), իսկ երկրորդում՝ Խորենացու կողմից չյիշուած (ինչպէս որակել են «Թաքցրած») աղբիւրների «յայտնաբերումով»:

Ահա, այս հարցի քննարկումով են ուսումնասիրողները գնացել (ուղղակի կամ անուղղակի միեւնոյնն է) Խորենացիագիտութեան միւս երկու հիմնահարցերի քննութեան՝ դէպի Մովսէս Խորենացու ժամանակի հարցը եւ դէպի նրա բազմաթիւ ու բազմաբովանդակ տեղեկութիւնների արժանահաւատութեան քննութիւնը:

Խորենացիագիտութեան առաջին ժամանակաշրջանի իւրատեսակ ամփոփում եւ երկրորդ ժամանակաշրջանի ելակէտ եւ ուղենիշ հանդիսացաւ գերմանացի հանրաճանաչ արեւելագէտ ու Խորենացիագէտ Ալֆրէդ Գուտշմիդի 1876 թ. հրատարակած «Մովսէս Խորենացու Հայոց



կապուած էր Մովսէս Խորենացու ապրած ժամանակի եւ խորենացիական բազում (փաստորէն՝ բոլոր) տեղեկութիւնների արժանահաւատութեան հետ, ուստի եւ, բնական է, այդ երեք հիմնական հարցերը նորից ուսումնասիրուել են որպէս մէկ ամբողջութիւն, այժմ արդէն՝ առաւել հանգամանորէն եւ առաւել ընդգրկուն չափերով: Եղաւ այնպէս, որ Խորենացիագիտութեան «մոլեգնոտ միջնադարում» Մովսէս Խորենացու տեղեկութիւններից եւ ոչ մէկը գիտական ուշադրութիւնից դուրս չմնաց, էլ չենք ասում, որ շատ ու շատ տեղեկութիւններ էլ վերաբընանարկուեցին ու վերաբընարկուեցին, աւելի ճիշտ, մերժուեցին ու վերամերժուեցին:

Ահա այս պարագաներում, կ'ասէինք՝ Մովսէս Խորենացու, նրա «Հայոց պատմութեան» եւ այլ գործերի համար խիստ աննպաստ պայմաններում (այդ էին թելադրում ժամանակի գիտական պատկերացումները), «Հանդէս ամսօրեայ»-ն սկսեց իր գործունէութիւնը: Հրատարակման առաջին 25-ամեայ ժամանակահատուածում «Հանդէս ամսօրեայ»-ն իր շուրջն է համախմբում այնպիսի նշանաւոր հայագէտներին, ինչպիսիք էին Հ. Գաթրճեան, Հ. Տաշեան, Ն. Մատթեան, Ֆ. Միւլլէր, Ա. Կարիէր, Ս. Պարոնեան, Ֆ. Կոնիբեր, Գր. Խալաթեան, Ն. Մառ, Հ. Գ. Մենեւիչեան, Յ. Մարկուարտ, Ն. Բիւզանդացի, Հ. Թ. Կէտիկեան, Բ. Խալաթեան, Մ. Օրմանեան, Հ. Հ. Համբարեան, Հ. Ն. Ակիւնեան, Հ. Փետտեր, Հ. Աստուրեան եւ ուրիշներ:

Խորենացիագէտներին այս պատկառողականուններն իսկ, ինչպէս նաեւ «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում անընդմէջ տպագրուած նրանց ուսումնասիրութիւնների առատութիւնը (առաջին 25-ամեակում՝ շուրջ 50 ուսումնասիրութիւն, շատերը խիստ ընդարձակածաւալ) կասկած չեն յարուցում, որ «Հանդէս ամսօրեայ»-ն խորենացիագիտութեան ուղղութեամբ ահագնաչափ զիտահարգմանկերպական աշխատանք է ծաւալել: Բաւական է ասել, որ տուեալ 25-ամեակում չի հանդիպում որեւէ տարի, իսկ ատանձին տարիներում՝ նոյնիսկ որեւէ ամիս, որ «Հանդէս ամսօրեայ»-ն տպագրած չլինի Խորենացիագիտական որեւէ նիւթ՝ յօդուած, հաղորդում, գրախօսութիւն կամ նորայայտ յայտնագործութիւն: Բացի այս, նիւթերայայտ յայտնագործութիւն: Բացի այս, նիւթերը մատուցուած են մեծ խնամքով ու հոգատարութեամբ, յաճախ՝ բնագրերին զուգահեռ

թարգմանութիւններ, եւ ըստ ամենայնի յարգանք է նկատուում հեղինակների ու նրանց գործի նկատմամբ:

էութիւնը սակայն ուսումնասիրութիւնների քանակը չէ, ոչ էլ դրանց մատուցման ձեւերն ու եղանակները: Ամենակարեւորը եւ ուսանելին, որ «Հանդէս ամսօրեայ»-ն ծաւալել է գիտական անաչառ բանավէճ, բնաւ չի գնացել միակողմանիութեան ուղիով եւ հաւասարապէս տեղ է տուել թէ մէկ, թէ միւս կողմի ուսումնասիրողներին: Այլ կերպ ասած, եղել է խիստ արդարադատ եւ մեծապէս նպաստել է գիտական ճշմարտութիւնները ի յայտ բերելու գործին:

Օրինակ, «Հանդէս ամսօրեայ»-ն մի կողմից տպագրել է Ա. Կարիէրի ուսումնասիրութիւնները «Մովսէս Խորենացի եւ նահապետական ծննդաբանութիւնը»- ՀԱ, 1891, «Մովսէս Խորենացու մէկ նոր աղբիւրը»- ՀԱ, 1892, «Նորագոյն աղբիւրը Մովսիսի Խորենացու»- ՀԱ, 1892, 1893, «Աբգարու գրոյցը Մ. Խորենացու պատմութեան մէջ»- ՀԱ, 1896 եւ այլն, որոնք բոլորն էլ ունեն խորենացիամերժ ուղղութիւն, այսինքն՝ Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւնը» ոչ մի առումով չի համարուում արժանահաւատ սկզբնաղբիւր, ոչ էլ՝ Խորենացին 5-րդ դարի գործիչ ըստ Կարիէրի վերջին կարծիքի՝ 8-րդ դարի, իսկ միւս կողմից էլ Ս. Պարոնեանի գրախօսութիւնը, Ն. Մառի, Ֆ. Կոնիբերի ուսումնասիրութիւնները՝ ընդդէմ Ա. Գուտշմիդի. Ա. Կարիէրի, Գր. Խալաթեանցի (տե՛ս ՀԱ, 1892, 1895, 1902, 1903):

Խորենացիագիտական հիմնահարցերի իրենց ընդգրկումներով եւ խոր գիտականութեամբ անչափ կարեւոր են ու պարտաւորեցնող Հ. Յ. Տաշեանի թարգմանութեամբ «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրուած Ֆ. Կոնիբերի երկու ուսումնասիրութիւնները՝ «Խորենացու ժամանակի հարցը» (ՀԱ, 1902, յունուար-մարտ) եւ «Խորենացու պատմութեան աղբիւրաց խնդիրը» (ՀԱ, 1902, մայիս-յունիս, 1903, յունուար-փետրուար, մայիս, յուլիս, հոկտեմբեր-նոյեմբեր):

Առաջին ուսումնասիրութեամբ Ֆ. Կոնիբեր փաստարկել ու ցոյց է տուել Մ. Խորենացու 5-րդ դարի պատմիչ լինելը: Երկրորդ ուսումնասիրութեամբ հակադրուելով Ա. Գուտշմիդի եւ Ա. Կարիէրի, նա ապացուցել ու մերժել է Մովսէս Խորենացու համար սրանց ենթադրած կամ

«յայտնաբերած» աղբիւրները, համոզուած հաւատում է Խորենացու շատ տեղեկութիւնների արժանահաւատութեան եւ ընդհանրապէս, ցուցաբերել է անաչառ ու մեծ գիտնականի մօտեցում: Օրինակ, նա չի վարանում խոստովանել, որ Մովսէս Խորենացու «Հայոց պատմութեան» Գ գրքի Կէ գլխի շուրջ ինքը թոյլ է տուել սխալ եւ պատրաստ է վերանայելու եւ վերանայում է այդ սխալը: Հակառակ Ա. Կարիէրի եւ իր իսկ կարծիքի, նա գտնում է, որ այսպէս ասած՝ «Փոքր Սոկրատ» (Սոկրատի «Եկեղեցական պատմութեան» հայերէն համառոտ թարգմանութիւնը 7-րդ դարի վերջին) Մովսէս Խորենացու համար աղբիւր չի ծառայել, որ, հետեւաբար, այդ հիման վրայ Խորենացուն 8-րդ դար բերելը՝ ճիշտ չէ: Համոզիչ փաստերով ապացուցում է նաեւ, որ Յովհան Մալալայի «Ժամանակագրութեան» հայերէն թարգմանութիւնը եւս (6-րդ դարի վերջ) Խորենացուն աղբիւր չէ (ՀԱ, 1902, էջ 195-197, 236-240), ոչ էլ Ղազար Փարպեցու «Պատմութիւնը» (ՀԱ, 1903, էջ 30-36):

Խորենացիագիտութեան հարցերում (եւ ընդհանրապէս) իրենց խոր գիտականութեամբ եւ բանավիճակին բնոյթով աչքի են ընկնում նաեւ Հ. Յ. Տաշեանի ուսումնասիրութիւնները, որոնցից շատերը առաջին անգամ տպագրուել են «Հանդէս ամսօրեայ»-ի էջերում՝ սկսած դեռեւս 1889 թուականից: Ուշագրաւ են յատկապէս հետեւեալ ուսումնասիրութիւնները՝ «Սկզբնաւորութիւնը Երեսնայ եկեղեցուցի եւ Աբգարու գրոյցը» (ՀԱ, 1889, մարտ-ապրիլ), «Ագաթանգեղոս առ Գէորգայ ասորի եպիսկոպոսի» (ՀԱ, 1890, յունուար-յուլիս), «Ստոյն Կալիսթենայ Վարուց Ալեքսանդրի ուսումնասիրութիւնը» (ՀԱ, 1891, յունուար-դեկտեմբեր), «Վարդապետութիւն առաջելոց անվաւերական կանոնաց մատեանը» (ՀԱ, 1893, յունուար, մարտ-ապրիլ, յունիս-դեկտեմբեր, 1894, յունուար, մարտ՝ մնում է շարունակելի), «Թղթակցութիւն Աբգարու եւ Քրիստոսի ըստ նորա-գիտ արձանագրութեան Եփեսոսի» (ՀԱ, 1900, գիտարձանագրութեան Եփեսոսի) (ՀԱ, 1900, սեպտեմբեր-նոյեմբեր), «Արչակունի դրամներ» (ՀԱ, 1904, հոկտեմբեր-դեկտեմբեր, 1905, օգոստոս, հոկտեմբեր) եւ այլն:

Այս ուսումնասիրութիւններում մեծավատակ եւ հմուտ հայագէտը բազմիցս անդրադարձել է խորենացիագիտութեան հիմնահարցերին ու ենթահարցերին, յատկապէս՝ խորենացիական տեղեկութիւնների արժանահաւատութեան

բացասական միջնորոտը, յաճախ ցոյց է տուել դրանցում եղած պատմական ճշմարտութիւնները: Արդ, բազմաթիւ օրինակներից նշենք մէկը միայն: «Արչակունի դրամներ» ուսումնասիրութեան մէջ, հետեւելով ականաւոր դրամագէտներ՝ Է. Բաբելոնին, Օ. Բլաուին եւ Ա. Պետրովիչին, Հ. Յ. Տաշեան եւս անճիշտ չի համարում Խորենացու յիշած հայ Արչակունիների թագաւորութեան հիմնադիր Վաղարշակի գոյութիւնը մ. թ. ա. 2-րդ դարի երկրորդ կեսին, ինչպէս նաեւ նրա գործերի իրողութիւնը տուեալ ժամանակաշրջանում (ՀԱ, 1905, ապրիլ): Այսինքն՝ Հ. Յ. Տաշեան հակադրուել է արդէն ընդունելի համարուած կարծիքին, թէ Տրդատն է հայ Արչակունիների թագաւորութեան հիմնադիրը եւ, իբր, հիմնադրում՝ մ. թ. առաջին դարի կեսերին:

Ահա. այսպիսի եւ նմանաբնոյթ բանավէճեր է ծաւալել «Հանդէս ամսօրեայ»-ն խորենացիագիտութեան հարցերի շուրջ, որ, ինչ խօսք, նրա գիտական անաչառ վերաբերմունքի անուրանալի երաշխիքներից է:

Այս դեռ բոլորը չէ: 19-րդ դարի վերջերից «Այլեւայլ» եւ ապա «Ազգային քերթերի ծաղկեփունջ» խորագրերի տակ «Հանդէս ամսօրեայ»-ն զանազան արժէքաւոր հաղորդումներ է տպագրել հայագիտութեան եւ, մասնաւորապէս, խորենացիագիտութեան վերաբերեալ: Նպատակն է ընթերցողներին ծանօթացնելու, թէ հայկական միւս պարբերականները ի՞նչ են կատարում այդ բնագաւառներում, ի՞նչ նոր գիւտեր ու տեսակէտներ կան եւ այլն:

Օրինակ, այդպիսի մի հաղորդումից իմանում ենք, որ 1896-ին Փարիզի Ազգային գրադարանում յայտնաբերուել են Մար-Աբաս Կատիւնայի Մատեանի բեկորները (իրականում քաղուածքներ), որ դրանք Ա. Կարիէրի մօտ են եւ շուտով կը հրատարակուեն (ՀԱ, 1897, յունուար):

Կամ այն, որ Եփեսոսում յայտնաբերուել է մի արձանագրութիւն, որի բովանդակութիւնը Քրիստոս-Աբգար «նամակագրութեան» բովանդակութիւնն է յիշեցնում (ՀԱ, 1900, մայիս-յունիս):

Կամ այն, որ Նորայր Բիւզանդացի «Մշակ» թերթի 1898 թ. համարներում (նո. 192, 193, 195) հանդէս է եկել Մովսէս Խորենացու քննադատների դէմ եւ «. . . իւր անխախտ համոզումը կը հաստատէ որ՝ ոչ թէ Խորենացին ուրիշ մատե-

նագիրներին փոխ է առած, այլ ասոնք իրմէ, եւ թէ 678 թուականէն շատ յառաջ Խորենացույ պատմութիւնը կայր» (ՀԱ, 1898, դեկտեմբեր):

Այս կարգի հաղորդումները, բնական է, նորից ու նորից ուշադրութիւն են բեւեռել խորենացիագիտութեան հարցերի վրայ, հիմք եւ ուղեցոյց են դարձել նոր ուսումնասիրութիւններին եւ, վերջին հաշուով, նպաստել Խորենացու տեղեկութիւններին ճիշտն ու անճիշտը յայտնաբերելու գործին: Մի խօսքով, «Հանդէս ամսօրեայ»-ն ամէն ինչ արել է խորենացիագիտական հաւասարագոր եւ բարձր մակարդակի բանավէճ ծաւալելու համար՝ բնաւ չխորշելով, որ իր իսկ տպագրած այս կամ այն կարծիքին հակադրել է բոլորովին հակառակ կարծիք կամ տեսակէտ: Այսպիսին է «Հանդէս ամսօրեայ»-ի, այսպէս ասած, խորենացիագիտական գործելա-

կերպը՝ գիտականօրէն իրօք ճիշտ եւ ուսանելի գործելակերպ:

Եւ առհասարակ 100-ամեայ գործունէութեան ամբողջ ժամանակաշրջանում «Հանդէս ամսօրեայ»-ն կանգնած է եղել գիտականութեան բարձր դիրքերում, անընդհատ ծաւալել է գիտական սուր բանավէճեր եւ ընթացել ճշմարտութիւնները յայտնաբերելու դժուարագնաց ճանապարհով:

Ողջունելով «Հանդէս ամսօրեայ»-ի դարադարձը. ցանկանք նրան նոր դարերի երկարակեցութիւն եւ նոր մաքառումներ ու ներդրումներ հայագիտութեան ասպարէզում:

25 մարտի 1987. թ., Երեւան

ԼԵՒՈՆ ՇԱՀԻՆԵԱՆ

(Պատմական գիտութիւնների քեկեանու, դոցեմս)

### «ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ»-Ն ԵՒ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Մի հանդէս, որի նպատակն էր լինել «ձեռնտու՝ Ազգին մտաւոր եւ բարոյական հարբատութիւնն յաճախելու» եւ որի կոչումն էր նըպաստել հայ ժողովրդի պատմութեան ու մշակոյթի ուսումնասիրութեան գործին, չէր կարող անտարբեր մնալ հայ մատենագրութեան դէմքերից մէկին՝ Ներսէս Շնորհալու գրական ժառանգութեան նկատմամբ, մանաւանդ որ նրա ստեղծագործութեան մէջ անդրադարձումն է գտել եւ՝ հայոց պատմութեան, եւ՝ դաւանանքի ու գաղափարական պայքարի, երաժշտական արուեստի ու գրականութեան, գրական լեզուի, նաեւ առաւել երկրորդական, ասեմք, տաղաչափութեան, բազմաթիւ խնդիրներ, հարցադրումներ: Ուստի բնական է, որ Շնորհալուն վերաբերող արժէքաւոր նիւթեր ու դիտարկումներ կարելի է գտնել ոչ միայն հայոց միջնադարեան գրականութեան, այլեւ պատմութեան տարբեր խնդիրներ արժարժող հետազոտութիւններում, հնագիտական, ազգագրական յօդուածներում, գրախօսականների մէջ, ձեռագրացուցակներում: Այսպէս, Շնորհալուն վերաբերող արժէքաւոր դիտողութիւններ են պարունակում բելգիացի հայագէտ Ֆելիքս Նելի «Հին Հայաստանը եւ նրա գրականութիւնը» աշխատութեան մատենախօսականը, «Ստոյն Կալիսթենեայ Վարուց Աղեքսանդրի ուսումնասիրութիւնը» (Հ. Յ. Տաշեան), «Արեւը հայ սիրութիւնը» (Մ. Պապիկեան), «Հայոց կաթողիկոսական աթոռին բարձումը 11-րդ դարուն երկրորդ կիսուն» (Հ. Պերպերեան) յօդուածները եւ այլն: «Ծովքի կաթողիկոսարանը» յօդուածի հեղինակը (Բ.) մասնաւորապէս նկատում է. «Շնորհալուն տաղերը շատ արժէքաւոր են եւ աշխարհագրական անվիճելի ճշդութիւն մ'ունեն, որուն դժբախտաբար բնաւ ուշադրութիւն չեն ըրած անոնք, որ Ծովքը մինչեւ Խարբերդ կամ Արղնի կը տանին»<sup>1</sup>:

Հետեւելով եւրոպական հայագիտութեան նորութիւններին, «Հանդէսը» դրանցից կարեւորագոյնները ծանօթացնում է իր ընթերցողներին՝ թարգմանաբար, նկարագրօրէն կամ գրախօսութեամբ: Այս առումով մեզ համար կարեւոր է Պ. Ֆետտերին նուիրուած հաղորդումը (Հ. Յ. Տաշեան): Գերմանացի հայագէտի յօդուածը տպագրուել է Տիւբինգէնի աստուածաբանական եռամսեայ հանդէսի մէջ «Ողբերգութիւն Ս. Գրոց՝ կաթողիկոսին Հայոց Ներսիսի Դ. Շնորհալույ» (1898, Ի. II, S. 239-276), որտեղ ներկայացուած է կենսագրութիւնը) օգտուել է Հ. Լ. Ալիշանից), «Յիսուս Որդի» իր խօսքով՝ «մեծագոյն ողբերգութեան» վերլուծութիւնը եւ մասնական թարգմանութիւնը գերմաներէն: Հակառակ իր նախորդների, մասնաւորապէս Յակոբոս Վիլլոտի, որ այն անուանում էր, «ճշմարտիւ աստուածային գիրք», Պ. Ֆետտերը շատ խիստ չափանիշներով է մօտենում քերթուածին, առանց որեւէ վերապահութեան, առանց պատմական հայեացքի, նորորեայ «եւրոպացույ մը ճաշակին համեմատ», առարկելով ուրիշներին, որ բարձր են գնահատել այդ երկը: Ի հարկէ, գնահատութեան այս եղանակը սկզբունքի խնդիր է, եւ՝ կարելի է վիճել, առարկել: Բայց խստագոյն ցուցաչափով թերիններ մատնանշելով հանդերձ Ֆետտերը շատ բարձր գնահատական է տալիս ողբերգութեան:

«Նրկասիրութեանս գեղեցկութիւնը, — գրում է նա —, կապուած է գլխաւորաբար այն պարագային հետ, որ Ներսէս մեծ ճարտարութեամբ կը գործածէ հայերէն լեզուն. իւր տաղերուն մէջ հայերէնը ճշմարիտ գեղեցիկուն ներդաշնակութիւն մը կը ցուցնէ: Ուստի ողբերգութեանս հարգատու եւ ճշմարիտ արժէքը կը ընդունու համար անհրաժեշտ է անոր սկզբնագիր լեզուին հմուտ ըլլալ: Երբ գեղարուեստական երկս օտար լեզուի մը թարգմանուի, մանաւանդ եւրոպական նորագոյն լեզուի մը՝ որ բացատրութեան սեղմութեան եւ ճշգրտութեան, ինչպէս նաեւ ձեւերու ճոխութեան մասին ամենեւին իսկ չի կրնար մրցութեան բերուել հին հայերէնի հետ, այն ժամանակ սկզբնագրին երկնագեղ կենդանութիւն-

<sup>1</sup> «Հանդէս Ամսօրեայ», 1902, էջ 217: